«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ---------- 2022 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 1269-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 9-րդ մասի 6-րդ և 10-րդ մասի 3-րդ ու «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետերով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 657-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1269-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 26-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե. Նախազորակոչային տարիքի զինապարտ քաղաքացուն անձնագիր տրամադրում, անձնագրում օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարում են մինչև քաղաքացու 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած զինապարտ քաղաքացուն՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասերով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով, կամ պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի միջնորդությամբ՝ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին՝ նաև այլ ժամկետով՝ ուսման, բուժման, մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով, ինչպես նաև զինապարտ քաղաքացիներին անձնագիր կամ

նույնականացման քարտ տալու կամ փոխանակելու (բացառությամբ օտարերկրյա պետություններում բնակվող պահեստազորում հաշվառված կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումից հանված անձանց) կամ ըստ բնակության վայրի հաշվառելու գործողությունները կատարում են՝

- նախազորակոչային տարիքի քաղաքացու դեպքում՝ նախազորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկը ներկայացվելու և դրանում զինվորական հաշվառման կանգնած լինելու վերաբերյալ նշումների առկայության պարագայում,
- զորակոչային տարիքի քաղաքացու դեպքում՝ զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկը ներկայացվելու և դրանում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով սահմանված կարգով տարկետում ստացած լինելու վերաբերյալ նշումների առկայության պարագայում,
- պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչված կամ օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ պահեստազորում հաշվառված քաղաքացու դեպքում՝ զինվորական գրքույկը կամ սույն կարգի 13-րդ կետում նախատեսված տեղեկանքը ներկայացվելու պարագայում.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: